ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

06.12.2013
Ք. Իջևան

Ներկա էին խորհրդի բոլոր անդամները.

Օրակարգ

1.2013-14 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստում /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

2.Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին հաշվետվություն /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

3.Ընթացիկ հարցեր /Զեկուցող՝ Վ. Ալեքսանյան /:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ ձմեռային քննաշրջանը նախապատրաստվել է պատշաճ մակարդակով: Նախապես ուսանողներին ներկայացվել է քննաշրջանի ժամանակացույցը, բոլոր կուրսերում մանրամասնվել է քննությունների և ստուգարքների կազմակերպման կարգը, լուսաբանվել է գիտելիքների գնահատման կարգը: Ուսանողների ակտիվությունը խթանելու նպատակով, դասախոսներից նախապես պահանջվել է կիսամյակի ընթացքում ակտիվ և պատրաստակամ ուսանողներին ստուգարքներ նշանակել առանց լրացուցիչ հարցումների, ինչը դրական դեր կունենա շատ ուսանողների համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Սարհատյանը, Ա. Մարդանյանը, Ա. Հովակիմյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա ձմեռային քննաշրջանի ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ կետի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը: Ընթացիկ քննությունները անց են կացվելու թեստային համակարգով, որը նախապես որոշվել էր տնօրինության կողմից: Սակայն նա նշեց, որ փոխվել է ընթացիկ քննությունների գնահատման կարգը: Յուրաքանչյուր առարկայի համար նախապես ամբիոնին տրված հարցաշարից դասախոսը պետք է կազմի նվազագույնը թեստի վեց տարբերակ: Թեստը պետք է իր մեջ պարունակի չորս թեմա, յուրաքանչյուր թեման՝ երկու ենթահարց: Նախատեսված թեստային համակարգի 4 թեմաներից յուրաքանչյուրի

1-ական ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում /4 ենթահարց/ ուսանողին պետք է գնահատել 2 միավոր, 3 ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում՝ 1 միավոր, 2 ենթահարցին ճիշտ պատասխանելու դեպքում՝ 0 միավոր:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ստուգումները կիրականացվեն գրավոր կամ բանավոր տարբերակով:

Նշվեց նաև, որ պատրաստ է 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

Ընթացիկ քննությունների և ստուգումների անցկացման շրջանը կտևի սթ. դեկտեմբերի 16-ից մինչև հոկտեմբերի 28-ը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Սարհատյանը, Ա. Մարդանյանը, Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ կետի վերաբերյալ զեկուցողը նշեց, որ որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի կողմից ֆակուլտետին է տրվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգի նախագիծ: Սույն կարգով սահմանվում են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական խորհրդատուների գործունեության հիմնական ուղղվածությունը և դրույթները: Նա նշեց, որ նախագծում ներկայացված են խորհրդատուների ծառայությունը, պարտականությունները, իրավունքները, գործառույթները և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ա. Հովակիմյանը, Մ. Աղբալյանը, Լ. Թումանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ամբիոններում քննարկել նախագիծը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել գրավոր առաջարկություններ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. Ալեքսանյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Խաչատրյան